

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Բալասանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածով սահմանված օրենքի կարգավորման առարկան հստակեցման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե գյուղատնտեսության բնագավառում ո՞ր հարաբերությունները պետք է կարգավորվեն ներկայացված նախագծով, այդ բնագավառին առնչվող որ հարաբերություններն են արդեն իսկ կարգավորված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ որո՞նց իրավական կարգավորումը պետք է նախատեսվի այլ օրենքներով:

Բացի դրանից, հոդվածի 2-րդ մասում տեղին չէ գյուղի զարգացումը սույն օրենքի նախագծում ներառելը, քանի որ գյուղի զարգացումը բազմազործոն է և առնչվում է պետական կառավարման ու քաղաքականության բոլոր ոլորտներին: Այդ նկատառումով ամբողջ նախագծից պետք է հանվեն գյուղի զարգացմանը վերաբերող դրույթները:

2. 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետից հանել «մշակմանը, վերամշակմանը» բառերը.

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) գյուղատնտեսական ապրանք արտադրողներ՝ ֆիզիկական, իրավաբանական անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի և հումքի արտադրությամբ,».

3) 4-րդ կետում «գյուղացիական տնտեսություն» հասկացության սահմանումն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված այն մոտեցումը, համաձայն որի «գյուղացիական տնտեսությունը» բնութագրվում է մի շարք չափորոշիչներով, մասնավորապես, տնտեսությանը պատկանող հողամասերի չափերով, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակով, ապրանքայնության մակարդակով և այլն: Բացի դրանից, «գյուղատնտեսական» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «մթերքի և հումքի ապրանքային» բառերով:

Մասն առաջարկում ենք լրացնել նոր հասկացությամբ հետևյալ խմբագրությամբ. «գյուղատնտեսական արտադրանք՝ գյուղատնտեսական արտադրության արդյունքում ստացված գյուղատնտեսական հումք և մթերք, որը չի մշակվել և (կամ) վերամշակվել.»:

Հասկացությունների սահմանումների խմբագրումներն անհրաժեշտ է հաշվի առնել նախագծի ամբողջ տեքստում:

3. 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը խմբագրման կարիք ունի, քանի որ անհասկանալի են «գյուղատնտեսության ներճյուղային կառուցվածք» և «բարձր ավելացված արժեք» ունեցող արտահայտությունները:

4. 7-րդ հոդվածում, որպես գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղություն, դիտարկվել է պետական աջակցությունը՝ 9 ուղղությամբ, սակայն հաջորդ հոդվածներում անդրադարձ է կատարվել միայն 4 ուղղությամբ: Ընդ որում, 19-րդ հոդվածով նախատեսվում է, որ, գյուղատնտեսական նշանակության հողերի

պաշտպանության և դրանց բերրիության բարձրացման միջոցառումներ իրականացնելիս, գյուղատնտեսական ապրանք արտադրողներն ստանում են պետական աջակցություն հակա-կարկտային համակարգերի շահագործման, ինչպես նաև պարարտանյութերի, թունաքիմի-կատների ձեռքբերման համար, մինչդեռ նպատակահարմար է դիտարկել նշված պետական աջակցության ստացումը ոչ թե յուրաքանչյուր տարի, այլ առանձին տարիների համար՝ նշված աջակցության անհրաժեշտության առաջացման դեպքում: Այդ իսկ պատճառով առաջարկվում է մասնավորեցնել նշված աջակցության ձևերը (թունաքիմիկատների, պարարտանյութերի ձեռքբերում և այլն), քանի որ դրանց ուղղվածությունը, ըստ անհրաժեշտության, հստակեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվող և մշակվելիք ծրա-գրերում: Միաժամանակ առաջարկում ենք 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետում «խորացումը» բառը փոխարինել «շարունակումը» բառով,

բ. 2-րդ կետում «մակարդակի բարձրացումը» բառերը փոխարինել «ապահովումը» բառով,

գ. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) գյուղատնտեսությունում հարկային արտոնությունների տրամադրումից բազմակող-մանի աջակցության գործիքների կիրառման համակարգի անցման մեխանիզմների մշակումը և ներդրումը»,

դ. 12-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) գյուղատնտեսական հողատեսքերի մեխորատիվ վիճակի բարելավումը՝ աղա-զերծումը, գրունտային ջրերի մակարդակի կարգավորումը.»,

ե. 18-րդ կետում «գյուղատնտեսության» բառը փոխարինել «գյուղատնտեսական» բառով.

2) 2-րդ մասի՝

ա. 6-րդ կետում շարադրված դրույթը տեղափոխել նշված հոդվածի 1-ին մաս,

բ. 9-րդ կետից հանել «օրգանական գյուղատնտեսության արտադրության ձևավորմանն աջակցությունը» բառերը, քանի որ այն կրկնում է 1-ին մասի 13-րդ կետին:

5. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գյուղատնտեսության և գյուղի զարգացման բնագավառներում «իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված իրավասություններ», ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված պահանջներին, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված գործառույթներ ու լիազորություններ:

6. 9-րդ հոդվածի 1-մասի՝

1) 2-րդ և 4-րդ կետերով նախատեսվում է գյուղատնտեսական ապրանք արտադրողների նկատմամբ հատուկ (բարենպաստ) հարկային և մաքսային քաղաքականության կիրառում, իսկ 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով առաջարկվում է սննդամթերքի շուկայի կարգավորման համար իրականացնել հարկային տարբերակված քաղաքականություն՝ նախապատվությունը տալով սահմանամերձ և բարձր լեռնային տարածքներին:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ներկայումս գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գյուղատնտեսության ոլորտի համար արդեն իսկ սահմանված են մի շարք հարկային արտոնություններ: Մասնավորապես՝

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը,

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հարկվող եկամուտը որոշելիս գյուղատնտեսական արտադրությանը զբաղված հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը,

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ավելացված արժեքի հարկ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը գերազանցող մասի համար,

«Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ուժի մեջ է մտել 2012 թվականի ապրիլի 28-ին, հողի հարկ և գույքահարկ վճարող անձինք ազատվում են իրենց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի 2008 թվականի հունվարի 1-ին նախորդող հաշվետու ժամանակաշրջանների համար օրենքն ուժի մեջ մտնելու պահին չվճարված գույքահարկից և հողի հարկից, ինչպես նաև այդ պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու համար հարկային օրենսդրությանը սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից: Միաժամանակ, գույքահարկ և հողի հարկ վճարող այն ֆիզիկական անձինք, որոնք մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ փաստացի կատարել են 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար գույքահարկի և հողի հարկի վճարումները, սակայն ունեն դրանց մասով հաշվարկված և չվճարված տույժեր, օրենքն ուժի մեջ մտնելու պահից ազատվում են չվճարված տույժերը վճարելուց,

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար հողի հարկ վճարողները 1994 թվականի և հետագա տարիների համար ազատված են հողի հարկից, ինչպես նաև հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված տույժերից,

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու համար սահմանված է բազային տուրքի 5-ապատիկի չափով պետական տուրք՝ բացառությամբ սահմանամերձ, լեռնային և ծայրամասային բնակավայրերի, որոնց համար սահմանված է բազային տուրքի 30 տոկոսի չափով պետական տուրք, ինչն իրենից նույնպես ներկայացնում է սահմանամերձ և բարձր լեռնային տարածքների զարգացմանն ուղղված քաղաքականության տարր,

Բարենպաստ մաքսային քաղաքականության կիրառման կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արդեն իսկ կիրառվում են մի շարք արտոնություններ, մասնավորապես, գյուղատնտեսության մեջ օգտագործվող գրեթե բոլոր սարքավորումների, ինչպես նաև մի շարք սերմացուների և հատիկաբույսերի ներմուծումն ազատված է ինչպես մաքսատուրքի, այնպես էլ՝ ԱԱՀ-ի վճարումից.

2) 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով առաջարկվում է գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և սննդամթերքի շուկայում պետական միջամտությունների միջոցով իրականացնել գների կարգավորում, որն անընդունելի է, քանի որ ագրարային ոլորտում գնային ուղղակի կարգավորման քաղաքականության որդեգրումը՝ առանց տնտեսական արդյունավետության գնահատման և ազատ գնագոյացման մեխանիզմների հետ գնումային կամ ապրանքային միջամտությունների առավելությունների համեմատական հիմնավորման, կարող է հանգեցնել

անցանկալի հետևանքների (օրինակ՝ ոլորտում շահութաբերության մակարդակի չհիմնավորված աճի կամ նվազման, որը դիսկալին է Հայաստանում գյուղատնտեսական սահմանափակ ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործման տեսանկյունից): Միաժամանակ հայտնում ենք, որ 2011 թվականի սեպտեմբերի 15-ից Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է ԱՀԿ-ի պետական գնումների համաձայնագրին, որը նաև սահմանում է գնումների գործընթացներում որևէ խտրականության բացառումը:

Ելնելով շարադրվածից՝ առաջարկում ենք նախագծից հանել 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերը.

2) 3-րդ կետում «տեղական ապրանք արտադրողներից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերով՝ ելնելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն պահանջից, որ ցանկացած անձ ունի գնման գործընթացին մասնակցելու իրավունք (ներառյալ օտարերկրյա ֆիզիկական անձինք, կազմակերպություններ կամ քաղաքացիություն չունեցող անձինք):

7. 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին ենթակետը հակասում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին՝ համաձայն որի դրամավարկային քաղաքականությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) գյուղական տարածքներում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացում.»:

8. 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «(այսուհետ՝ եռամյա)» բառերը.

2) 7-րդ մասում «օգոստոսի 1-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով: Վերջինս

պայմանավորված է բյուջետային գործընթացի հետ կապված աշխատանքների կատարման հետ:

9. Խմբագրել 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված փորձագիտական հանձնաժողովի կազմում անկախ փորձագետներ, գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ, իրացնողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ կարող են ընդգրկվել միայն կանավորության սկզբունքով:

10. 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պետական ծրագրի եռամսյակի յուրաքանչյուր տարվա հասանելիք ֆինանսավորման չափը նվազման առումով անփոփոխ թողնելուն վերաբերող դրույթն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) գործընթացի շրջանակներում եռամյա ծրագրերի ֆինանսավորման չափերը յուրաքանչյուր տարի, անհրաժեշտության դեպքում, կարող են փոփոխվել, այդ թվում նաև՝ նվազման միտումով: Բացի դրանից, նպատակահարմար չէ պետական ծրագրի և ենթածրագրերի փորձաքննության կարգի, իրականացման ընթացքի վերաբերյալ դրույթների ներառումը նախագծում: Ուստի առաջարկում ենք նախագծից հանել 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, քանի որ նշված՝ դրանցում ամրագրված դրույթների կիրառումն էականորեն կնվազեցնի Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների ճկունության մակարդակը՝ գերակայությունների և ֆինանսական միջոցների առումով:

11. 15-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Գյուղատնտեսության ոլորտում պետական միասնական քաղաքականությունը և համապատասխան տարածքային նպատակային ծրագրերը մշակվում և իրականացվում են սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:»:

12. 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1) «զ» ենթակետում «մթերումը» բառը փոխարինել «մթերատվությունը» բառով.

2) «Ժբ» ենթակետում «առաջնային անհրաժեշտ» բառերը փոխարինել «կենսապես կարևորագույն» բառերով.

3) «Ժգ» ենթակետը «գյուղատնտեսական» բառերից հետո լրացնել «հիմնական» բառով:

13. 18-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետական աջակցությամբ գյուղատնտեսական ոլորտի ապահովագրության իրականացումը և պետության կողմից ապահովագրական վճարների սուբսիդավորումն ընդհանրապես կիրառելի չեն:

Նշված հանգամանքներով պայմանավորված, դեռևս վաղաժամկետ ենք համարում նախագծում գյուղատնտեսական ոլորտի ապահովագրությանն անդրադառնալը և կարծում ենք, որ նման քայլերը կարող են շուկայում խեղաթյուրել ապահովագրական պոլիսների գները և չարաշահումների պատճառ դառնալ:

Հարկ ենք համարում նշել, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունները հնարավորություն ունեն ապահովագրվել բնական աղետներից: Սակայն, հաշվի առնելով, որ գյուղատնտեսության ապահովագրությունը ռիսկերի գնահատման և կառավարման տեսանկյունից ապահովագրության բարդ տեսակ է, բավականին բարձր արժեք ունի, դժվար հասանելի է գրեթե բոլոր գյուղացիական տնտեսություններին: Իսնդրո առարկա հարցի կարգավորման նպատակով աշխատանքներ են իրականացվում ոլորտում ռիսկերի գնահատման գործընթացը հեշտացնելու և ապահովագրությունն էժան և գյուղական տնտեսություններին հասանելի դարձնելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ բանակցություններ են տարվում նաև Համաշխարհային բանկի հետ՝ Հայաստանի Հանրապետության բնական աղետների ռիսկերի գնահատման քարտեզագրումն իրականացնելու համար:

Վերջինիս իրականացման արդյունքում հնարավոր կլինի պատկերացում կազմել ըստ տարածաշրջանների առկա ռիսկերի և դրանց ապահովագրման համար անհրաժեշտ վճարների չափի մասին:

14. 20-րդ հոդվածով նախատեսվում է սննդամթերքի շուկայում գների պետական կարգավորմանն ուղղված ապրանքային միջամտություն: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թվականի հունվարի 3-ի N ՀՆ-0503-1 որոշման, Հայաստանի Հանրապետությունն անցել է ազատ գների և սակագների համակարգի՝ բացառությամբ հանրային ծառայությունների պետական կարգավորման ոլորտների, որոնց նկատմամբ սահմանվում է հստակ և հիմնավորված սակագնային քաղաքականություն: Ուստի, պետությունը կարող է միջամտել նախագծով սահմանված գյուղատնտեսական արտադրանքի գների կարգավորմանը՝ բացառապես ֆորս-մաժորային իրավիճակներում:

15. 22-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «պաշտոնական վիճակագրական տեղեկատվական պետական մարմնի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պետական վիճակագրություն իրականացնող մարմնի» բառերով.

2) 4-րդ մասի 1-ին կետում «որոշումները» բառը փոխարինել «հրամանները» բառով, 2-րդ կետից հանել «և տեղական ինքնակառավարման» բառերը:

16. Առաջարկում ենք հանել 23-րդ հոդվածը, քանի որ գյուղատնտեսության ոլորտում պաշտոնական վիճակագրության վարումն արդեն իսկ կարգավորվում է «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաշվառումն անցկացվում է յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ, իսկ 2-րդ կետի համաձայն գյուղատնտեսական հաշվառումն անցկացնելու մասին որոշումն ընդունվում է ոչ ուշ, քան գյուղատնտեսական հաշվառումն սկսելուց մեկ տարի առաջ:

17. Առաջարկում ենք հանել 24-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ այն հակասում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1.1-ին և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 4.2-րդ մասերի պահանջներին:

18. Նախագիծը ենթադրում է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության ձևերի և ծավալների ընդլայնում, սակայն նախագծում և դրա ընդունման հիմնավորման մեջ որևէ կերպ անդրադարձ չի կատարվում նշված աջակցությունից ակնկալվող արդյունքներին: Ընդ որում, որպես պետական աջակցության տարատեսակ նախատեսվել է սուբսիդիաների տրամադրումը, մինչդեռ աջակցության ձևերն անհրաժեշտության դեպքում կարող են դիտարկվել մշակվելիք ծրագրերի (եռամյա ծրագրեր) շրջանակներում: Ուստի առաջարկում ենք նախագծից հանել սուբսիդիաների տրամադրման վերաբերյալ դրույթները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ համանման օրենքի նախագիծ մշակվել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունում, օրենքի նախագծի հեղինակին առաջարկում ենք համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ օրենքի նախագծի կարգավորման առարկայի և իրավահարաբերությունների շրջանակի ճշգրտման գործում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ կազմակերպել քննարկումներ Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության և դրա կատարումն ապահովող միջոցառումների համատեքստում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Ներկայացնում ենք օրենքի նախագծի ընդունման դեպքում ընդունումից հետո դրա կատարումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 4 ամիս,

12-րդ հոդվածի 4-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 3 ամիս

13-րդ հոդվածի 4-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 4 ամիս,

18-րդ հոդվածի 4-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 5 ամիս,

20-րդ հոդվածի 3-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 5 ամիս:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԱԿՈՒՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծով նոր կարգավորումներ չեն նախատեսվում, ոլորտում գործող գյուղանյութական ապրանքարտադրողների և իրավաբանական անձանց համար վարչական ընթացակարգեր և լրացուցիչ ծախսեր չեն առաջանում* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանվում են գյուղատնտեսության ոլորտի պետական կարգավորման նպատակները, հիմնական ուղղությունները, գյուղատնտեսական մթերքի, արտադրանքի շուկայի պետական կարգավորման ձևերը:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են գյուղատնտեսական արտադրանքի շուկաների հետ:

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում հայտնաբերվել է՝

- Նախագծի 20-րդ հոդվածով նախատեսվում է գների պետական կարգավորում, որը կարող է բերել միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակման.
- Նախագծով նախատեսվում են ոլորտում պետական օժանդակության մի շարք ուղիներ, որը կախված իրականացման եղանակից պարունակում է մրցակցության բնագավառի վրա բացասական ազդեցության ռիսկեր,
- Սակայն հաշվի առնելով, որ Նախագծով առաջարկվում են ոլորտի աշխուժացման և գյուղմթերքների արտադրության խթանման մի շարք ուղիներ, վերջինս կբերի գործունեության միջավայրի բարելավման, որն էլ իր հերթին կբերի ոլորտում գործող սուբյեկտների թվի աճի և երկարաժամկետ հատվածում մրցակցության միջավայրի վրա կունենա դրական ազդեցություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության բնագավառի վրա *ոչ զգալի բացասական ազդեցություն* հայտնաբերվելու եզրակացություն:

ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա, քանի որ առաջարկվող օրենքով նախատեսվում է կարգավորել այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են գյուղատնտեսական ապրանք արտադրողների, քաղաքացիների, իրավաբանական անձանց և գյուղատնտեսության զարգացման ոլորտի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3 Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին ու պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունն առկա է, սակայն չի ներկայացվում համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

Եզրակացություն

«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 271 հոդվածով, համաձայն ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման՝ իրականացվել է «Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում, համաձայն որի՝ նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի դրական ազդեցություն:

Եզրակացություն

«Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Ներկայացված տեսքով Նախագծի ընդունումը կարող է հանգեցնել պետական բյուջեների եկամուտների նվազեցմանը (մասնավորապես՝ Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսվում են գյուղատնտեսական ապրանքարտադրողների նկատմամբ հատուկ (բարենպաստ) հարկային և մաքսային քաղաքականության կիրառում, իսկ 10-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով առաջարկվում է սննդամթերքի շուկայի կարգավորման համար իրականացնել հարկային տարբերակված քաղաքականություն՝ նախապատվությունը տալով սահմանամերձ և բարձրլեռնային տարածքներին), ինչպես նաև ծախսերի ավելացմանը (մասնավորապես՝ Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով, 10-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսվում է սուբսիդիաների տրամադրում, իսկ 18-րդ հոդվածով նախատեսվում է պետական աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսական ապահովագրություն):

Ընդ որում Նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության չափը հնարավոր չէ որոշել նախագծում նշված դրույթներում հստակության բացակայության հետ կապված:

Միաժամանակ Նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարությունների կողմից արված առաջարկությունների ընդունման դեպքում պետական բյուջեների ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չի առաջացնի և շեղումները կտատանվեն ՀՀ 2013-2015թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի կանխատեսումների միջակայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Գյուղատնտեսության մասին

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱ Ն

1. Սույն օրենքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են գյուղատնտեսական ապրանքարտադրողների, քաղաքացիների, իրավաբանական անձանց եւ գյուղատնտեսության զարգացման բնագավառում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ:

2. Սույն օրենքը սահմանում է գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, ուղղությունները, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի պետական կարգավորման մեխանիզմները:

ՀՈՂՎԱԾ 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից եւ այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ՀՈՂՎԱԾ 3. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը.

1) գյուղատնտեսական արտադրություն՝ գործունեության տեսակ, որը նպատակաուղղված է բուսական եւ կենդանական ծագման հումքի եւ մթերքի արտադրությանը, մշակմանը, վերամշակմանը եւ իրացմանը.

2) գյուղատնտեսություն՝ տնտեսության իրական հատվածի ոլորտ, որը հիմնված է գյուղատնտեսական արտադրության վրա.

3) գյուղատնտեսական ապրանքարտադրողներ՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ, ինչպես նաեւ սեփական արտադրության գյուղատնտեսական հումքի եւ մթերքի մշակմամբ եւ(կամ) վերամշակմամբ.

4) գյուղացիական տնտեսություն՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող, համատեղ տնտեսություն վարող քաղաքացիների (ընտանիքի անդամների) ինքնուրույն կազմակերպական միավոր: Գյուղացիական տնտեսությունը կարող է ստեղծվել նաեւ մեկ քաղաքացու կողմից.

5) գյուղատնտեսական հումքի եւ մթերքի մշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում էական չի փոփոխվում գյուղատնտեսական հումքի եւ մթերքի ֆիզիկական եւ քիմիական կազմը.

6) գյուղատնտեսական հումքի եւ մթերքի վերամշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում զգալիորեն փոփոխվում է գյուղատնտեսական հումքի եւ մթերքի ֆիզիկական եւ(կամ)

քիմիական կազմը.

7) ագրոպարենային համակարգ՝ գյուղատնտեսության, գյուղատնտեսական հումքի եւ մթերքի վերամշակող արդյունաբերության ճյուղերի, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ու մատակարարումների ոլորտի ամբողջություն.

8) ագրարային քաղաքականություն՝ պետական սոցիալ տնտեսական քաղաքականության բաղկացուցիչն է՝ ուղղված գյուղատնտեսության եւ գյուղի զարգացմանը.

9) գյուղատնտեսական արտադրության համար անբարենպաստ տարածքներ՝ գյուղական տարածքներ, որտեղ բնակլիմայական, ժողովրդագրական, շրջակա միջավայրի աղտոտման, ենթակառուցվածքների թերզարգացության, սակավաջրության, հողատարման կամ այլ գործոններով պայմանավորված՝ գյուղատնտեսական արտադրությունից ստացվում է համեմատաբար ցածր համախառն արտադրանք.

10) գյուղի զարգացում՝ գյուղական համայնքներում բնակվող քաղաքացիների կյանքի որակի շարունակական բարելավում՝ արտադրական (ֆիզիկական), սոցիալական, շուկայական (ֆինանսական) ենթակառուցվածքների ձեւավորման ու զարգացման, միջհամայնքային կապերի ամրապնդման, գյուղատնտեսական արտադրությանն այլընտրանքային գործունեության խթանման, գյուղատնտեսությունում կայուն աճի ապահովման, ինչպես նաեւ ազգային մշակույթի, էկոլոգիական համակարգերի, լանդշաֆտների զարգացման ու արդյունավետ կառավարման միջոցով.

11) գյուղական տարածք՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող համայնքների վարչական տարածքների ամբողջություն.

12) գյուղատնտեսական արտադրությանն այլընտրանքային գործունեություն՝ գյուղական տարածքներում գյուղատնտեսական գործունեությանը չվերաբերող ցանկացած այլ ձեռնարկատիրական գործունեություն.

13) ապրանքային միջամտություն՝ սննդամթերքի ներքին շուկայում գների էական նվազման կամ անհիմն բարձրացման դեպքում պետության լիազոր մարմնի կողմից իրականացվող՝ սննդամթերքի կարգավորիչ իրացման կամ գնումների գործարքներ.

14) արտահանման խրախուսում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սննդամթերքի արտահանման խթանմանն ուղղված օրենսդրական, տնտեսական եւ կազմակերպական համալիր միջոցառումներ՝ բացառությամբ արտահանման լրավճարների:

ԳԼՈՒԽ 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՈԴԿԱԾ 4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

1. Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման բնագավառները տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ժողովրդագրական, ազգագրական, մշակույթի պահպանման ու զարգացման, ինչպես նաեւ բնակչության կենսաապահովման տեսանկյունից հանդիսանում են պետական քաղաքականության ռազմավարական գերակայություններ:

2. Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման պետական միասնական քաղաքականության մշակումն ապահովում են պետական կառավարման լիազորված մարմինները՝ ռազմավարությունների, հայեցակարգերի, նպատակային ծրագրերի եւ այլ ծրագրային փաստաթղթերի նախագծերի մշակման միջոցով, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՀՈՂՎԱԾ 5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝
 - 1) նպաստել երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը.
 - 2) անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել գյուղական տարածքներում բնակչության եկամուտների ավելացման համար.
 - 3) աստիճանաբար հաղթահարել գյուղական աղքատությունը, մեղմել բնակչության անցանկալի արտահոսքը, ամրապնդել գյուղական բնակավայրերը, ինչպես նաեւ գյուղական տարածքներում ընդլայնել գյուղատնտեսական արտադրությանն այլընտրանքային գործունեությունը.
 - 4) գյուղատնտեսության եւ գյուղական տարածքների ներդաշնակ զարգացման միջոցով՝ գյուղական բնակչության կյանքի որակի բարելավում.
 - 5) բարելավել գյուղատնտեսության ներճյուղային կառուցվածքը, մեծացնել բարձր ավելացված արժեք ապահովող գյուղատնտեսական հումքի եւ մթերքի արտադրության տեսակարար կշիռը.
 - 6) գյուղատնտեսության ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայրի ձեւավորումը եւ ներդրումների ծավալի աճի խթանումը.
 - 7) գյուղական տարածքներում հողային, ջրային, աշխատանքային, գիտատեխնիկական, էներգետիկ եւ այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում.
 - 8) շուկայական կողմնորոշում ունեցող մրցունակ գյուղատնտեսական հատվածի ձեւավորում.
 - 9) ապահովել երկրի ագրոպարենային համակարգի կայուն եւ համաչափ զարգացումը.
 - 10) ապահովել սահմանամամերձ, լեռնային եւ բարձրլեռնային եւ գյուղատնտեսական արտադրության համար անբարենպաստ տարածքների առաջանցիկ զարգացումը.
 - 11) գյուղատնտեսության կարիքների համար օգտագործվող բնական ռեսուրսների պահպանումը եւ հավասարակշռված օգտագործումը.
 - 12) գյուղատնտեսական ապրանքարտադրողների եկամուտների բարձրացումն ապահովող ենթակառուցվածքների զարգացումը, արդյունավետ գործող գյուղատնտեսական սննդամթերքի շուկայի ձեւավորումը:

ՀՈՂՎԱԾ 6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Պետական ագրարային քաղաքականության սկզբունքներն են՝
 - 1) գյուղատնտեսական ապրանքարտադրողների համար պետական աջակցության հասցեականությունը եւ հասանելիությունը.
 - 2) ագրարային քաղաքականության մասին տեղեկատվության մատչելիությունը.
 - 3) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի միասնականությունը եւ մրցակցության հավասար պայմանների ապահովումը.
 - 4) ագրարային քաղաքականության միջոցառումների իրականացման հաջորդականությունը եւ նրա կայուն զարգացումը.
 - 5) ագրարային քաղաքականության մշակմանը եւ իրականացմանը՝ գյուղատնտեսական

ապրանքարտադրողների միությունների (միավորումների), կոոպերատիվների մասնակցությունը:

ՀՈՂՎԱԾ 7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գյուղատնտեսության պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝
 - 1) ագրարային բարեփոխումների խորացումը, տնտեսավարման ձեւերի կատարելագործումը.
 - 2) պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը.
 - 3) տեղական արտադրության կենսապես կարետրագույն սննդամթերքի ինքնաբավության (պարենային անկախության) մակարդակի բարձրացումը.
 - 4) սննդամթերքի արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավումը.
 - 5) սննդամթերքի որակի եւ անվտանգության ապահովման համակարգի զարգացումը.
 - 6) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի կայունության ապահովումը եւ դրա ենթակառուցվածքների զարգացումը.
 - 7) գյուղատնտեսական ապրանքարտադրողներին պետական աջակցության ցուցաբերումը.
 - 8) տեղական գյուղատնտեսական ապրանքարտադրողների տնտեսական շահերի պաշտպանությունը ներքին եւ արտաքին շուկաներում.
 - 9) ոռոգման համակարգերի կենսունակության ապահովումը՝ ջրամբարների, մայր եւ միջհամայնքային ջրանցքների, ոռոգման ներտնտեսային ցանցերի վերականգնման, մեխանիկական ոռոգումն ինքնահոսի փոխարինման, գյուղացիական տնտեսություններում ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրման, սակագնային քաղաքականության բարելավման, ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման միջոցով.
 - 10) գոտիական մասնագիտացումը եւ արտադրական հզորությունների ռացիոնալ տեղաբաշխումը,
 - 11) գյուղատնտեսությունում հարկային արտոնությունների համակարգից սուբսիդավորման համակարգի անցման մեխանիզմների մշակումը եւ ներդրումը, գյուղատնտեսության վարկավորման մեխանիզմների կատարելագործումը եւ վարկային միջոցների ձեռքբերման մատչելիության մակարդակի բարձրացումը.
 - 12) գյուղատնտեսական հողատեսքերի մեկտրատիվ վիճակի բարելավումը՝ աղագերծումը, գրունտային ջրերի անթույլատրելի մակարդակի իջեցումը, արոտների բարելավումը եւ ջրարբիացումը.
 - 13) օրգանական գյուղատնտեսության զարգացմանն աջակցությունը.
 - 14) բուսաբուծությունում ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության տարածքների ընդլայնումը, ընտրասերման եւ սերմնաբուծության համակարգի զարգացումը, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների մշակումը եւ ներդրումը, բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացումը.
 - 15) անասնապահության ենթաճյուղերի արդյունավետ զուգակցմանն աջակցությունը, տոհմային անասնաբուծության զարգացման համալիր միջոցառումների իրականացումը, անասնաբուծության համակարգի բարելավումը եւ անասնաբուժական միջոցառումների

արդյունավետության բարձրացումը, անասնապահության կերի բազայի զարգացումը, անասնաբուժական առեստրային կազմակերպությունների զարգացմանն աջակցությունը.

16) գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների եւ մատակարարումների համակարգի զարգացմանն աջակցությունը.

17) ագրարային հատվածի գիտակրթական, խորհրդատվական համակարգի հետետողական զարգացումը.

18) գյուղատնտեսության համատարած հաշվառման պարբերական իրականացումը,

19) իրավական այլ ակտերով սահմանված ուղղություններով պետական քաղաքականության մշակումը եւ իրականացումը:

2. Գյուղի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) սոցիալական, արտադրական, շուկայական ենթակառուցվածքների ձեւավորման ու զարգացման միջոցով՝ գյուղական տարածքների բնակչության կենսամակարդակի բարձրացումը.

2) տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների ընդլայնման միջոցով՝ պետական կառավարման մարմինների իրավասությունների աստիճանական ապակենտրոնացումը.

3) գյուղական համայնքներին պետության պատվիրակված լիազորությունների ընդլայնումը, միջհամայնքային միավորումների ձեւավորմանն աջակցությունը.

4) գյուղական համայնքներում առողջապահական, կրթական, մշակութային, էներգամատակարարման, բնակկոմունալ ծառայություններից օգտվելու մատչելիության բարձրացումը, ինչպես նաեւ ճանապարհաշինարարության, տրանսպորտի, հեռահաղորդակցության եւ կենսապահովման այլ ոլորտների կայուն եւ համաչափ զարգացումը.

5) անտառների պաշտպանությունը, պահպանությունը, վերարտադրությունը եւ անտառային ռեսուրսների հավասարակշռված օգտագործումը, ինչպես նաեւ անտառշինարարության եւ մոնիթորինգի համակարգի բարելավումը.

6) գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, մասնավորապես՝ կոոպերատիվների, ընկերությունների, ընկերակցությունների, միությունների եւ կամավորության հիմունքներով գործող այլ միավորումների ձեւավորմանն օժանդակության միջոցով.

7) գյուղատնտեսական արտադրությանն այլընտրանքային գործունեության ընդլայնման հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը՝ ներդրումային գրավիչ միջավայրի ձեւավորման եւ նպատակամետ քաղաքականության իրագործման շնորհիվ.

8) հարկաբյուջետային, այդ թվում՝ սուբսիդավորման, երաշխիքային եւ աջակցության վճարների բնագավառներում տարբերակված քաղաքականության իրականացումը, առաջնությունը տալով բարձրլեռնային եւ սահմանամերձ բնակավայրերին.

9) ագրոէկոտորիզմի զարգացմանը, օրգանական գյուղատնտեսության արտադրության ձեւավորմանն աջակցությունը.

10) գյուղական տարածքներում գենդերային անհավասարության աստիճանական մեղմումը.

11) ժողովրդական արհեստների, տնայնագործության զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացումը.

12) անտառային պտուղների, հատապտուղների, դեղաբույսերի, այլ բուսատեսակների հավաքման, մշակման, վերամշակման, փաթեթավորման արտադրությունների ստեղծմանը, ոչ

ավանդական անասնաբուծության զարգացմանն աջակցությունը.

13) լանդշաֆտների արդյունավետ կառավարման, պահպանության, ծրագրման աշխատանքների համակարգումը.

14) գյուղական տարածքներում ռեկրեացիոն (զբոսաշրջության) առկա ներուժի արդյունավետ օգտագործումը.

15) վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական նպատակային ծրագրերի մշակման գործընթացում քաղաքաշինական հիմնավորումների, լուծումների, մոտեցումների ներառման ապահովումը՝ համաձայն ճարտարապետական ու շինարարական նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների.

16) գյուղական տարածքներում ինժեներական պաշտպանության, պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության, համայնքների գլխավոր հատակագծերի կազմման գործընթացի խթանումը.

17) ընդերքաօգտագործման բնագավառում օգտակար հանածոների հանույթի եւ մշակման առավել արդյունավետ, էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների կիրառումը.

18) գյուղական բնակչության կենսակերպի բարելավմանն ուղղված՝ անտառահատված տարածքների բնական եւ արհեստական վերարտադրության ապահովումը, համայնքային անտառների ձեւավորման պիլոտային ծրագրերի իրականացումը, պլանտացիոն անտառաբուծության կազմակերպումը.

19) կենսաբանական ռեսուրսների տնտեսական գնահատումը, հաշվառումը, կադաստրի վարումը, մոնիտորինգի անցկացումը, ինչպես նաեւ կենսառեսուրսների պահպանության եւ հավասարակշռված օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության ուժեղացումը.

20) ջրային ռեսուրսների արդյունաբերական եւ կենցաղային աղտոտման մոնիտորինգի անցկացումը, կեղտաջրերի մաքրման արդիական տեխնոլոգիաների աստիճանական ներդրումը, ջրաղբյուրների սանիտարահիգիենիկ նորմերի պահպանումը, սանիտարական գոտիների ցանցի ընդլայնումը.

21) արոտավայրերի վիճակի գնահատման արդյունքներից ելնելով՝ դրանց ջրարբիացման, բուսածածկի վերականգնման, բարելավման, պահպանման աշխատանքների խրախուսումը.

22) իրավական այլ ակտերով սահմանված ուղղություններով պետական քաղաքականության մշակումը եւ իրականացումը:

ՀՈՂՎԱԾ 8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման քաղաքականությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պետական կառավարման հանրապետական եւ տարածքային կառավարման մարմինների միջոցով, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինները՝ օրենքով սահմանված կարգով:

2. Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման քաղաքականության իրականացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններն են՝

1) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ խորհրդատվական մարմինների ձեւավորումը.

2) գյուղատնտեսական արտադրության խթանման եւ գյուղի զարգացման բնագավառներում իրագործվող քաղաքականության համակարգումը.

3) իր կողմից լիազորված մարմինների նպատակների, խնդիրների եւ գործառույթների սահմանումը՝ սննդամթերքի արտադրությունից մինչեւ սպառումն ապրանքային շարժի բոլոր փուլերում, ինչպես նաեւ գյուղի զարգացման բնագավառներում.

4) տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, ինչպես նաեւ իրավիճակի կանխատեսումների ապահովումը.

5) գյուղական տարածքներում ձեռնարկատիրական գործունեության խթանման, սուբսիդավորման, ապահովագրության, կոոպերացման, գյուղատնտեսության առանձին ենթաճյուղերի զարգացմանն ուղղված՝ նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը.

6) իրականացնում է սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով վերապահված լիազորություններ:

ՀՈՂՎԱԾ 9. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Ագրարային քաղաքականության իրականացման հիմնական միջոցներն են՝

1) գյուղատնտեսական ապրանքարտադրողներին պետական միջոցների տրամադրումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) գյուղատնտեսական ապրանքարտադրողների նկատմամբ հատուկ (բարենպաստ) հարկային քաղաքականության կիրառումը.

3) պետական եւ համայնքային կարիքների համար գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի գնումների իրականացումը՝ տեղական ապրանքարտադրողներից.

4) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի կարգավորումը, այդ թվում՝ սակագնային եւ ոչ սակագնային կարգավորումը, հատուկ (բարենպաստ) մաքսային քաղաքականության կիրառումը.

5) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայում հատուկ (բարենպաստ) վարկային քաղաքականության կիրառումը.

6) գյուղատնտեսական ապրանքարտադրողներին եւ գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի մյուս մասնակիցներին տեղեկատվությամբ եւ խորհրդատվությամբ ապահովումը.

7) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի հակամենաշնորհային կարգավորումը.

8) պետական ագրարային քաղաքականության ձեւավորմանն ու իրականացմանը հասարակական կազմակերպությունների եւ գյուղատնտեսական ապրանքարտադրողների միությունների մասնակցության ապահովումը.

9) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայում գնային կարգավորման քաղաքականության իրականացումը, ներառյալ՝ պետության կողմից ապրանքային միջամտությունների գործարքների իրականացումը.

10) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայում գնումային միջամտությունների եւ(կամ) ապրանքային միջամտությունների միջոցով՝ ապրանքների գների կանոնակարգումը.

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներ:

ԳԼՈՒԽ 4

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ

ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 10. ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր կողմից լիազորված մարմինների միջոցով իրականացնում է սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով սննդամթերքի շուկայի կարգավորումը հետեւյալ հիմնական ուղղություններով՝
 - 1) հարկաբյուջետային եւ դրամավարկային համարժեք քաղաքականության իրագործման շնորհիվ նախադրյալներ է ստեղծում ներքին շուկայում սննդամթերքի ֆիզիկական եւ տնտեսական մատչելիության ապահովման համար.
 - 2) ներքին շուկայի եւ տեղական արտադրողների շահերի պաշտպանության նպատակով իրականացնում է հիմնավորված սակագնային (տարիֆային) կարգավորման քաղաքականություն, ելնելով գյուղատնտեսական արտադրության կառուցվածքից եւ նախընտրելի մասնագիտացումից.
 - 3) տեղական արտադրության խթանման նպատակով գյուղատնտեսական հողատեսքերի, անասնազխաքանակի, մեղվաընտանիքների, ինչպես նաեւ արտադրատեխնիկական ծառայությունների բնագավառներում սուբսիդիաների տրամադրում՝ առաջնահերթությունը տալով գյուղատնտեսական արտադրության համար անբարենպաստ տարածքներում տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին: Սուբսիդավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
 - 4) կիրառում է գյուղատնտեսական մշակաբույսերի, կենդանիների եւ սննդամթերքի ներմուծման նկատմամբ սանիտարական եւ բուսասանիտարական գիտականորեն հիմնավորված սահմանափակումները.
 - 5) իրականացնում է հարկային տարբերակված քաղաքականություն՝ նախապատվությունը տալով սահմանամերձ եւ բարձրլեռնային տարածքներին.
 - 6) խրախուսում է արտահանման ներուժ ունեցող արտադրատեսակների արտադրության խթանումը.
 - 7) գյուղական տարածքներում ապահովում է փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումն արտոնյալ պայմաններով.
 - 8) օժանդակում է հանրապետության տարածքում գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկաների, տոնավաճառների համակարգի ձեւավորմանը.
 - 9) գյուղատնտեսական արտադրության դիսկերի մեղմմանն ուղղված ապահովագրական համակարգի ներդրմանն օժանդակում.
 - 10) անհրաժեշտության դեպքում իրականացնում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի սեզոնային քվոտավորում.
 - 11) ապահովում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ որակի եւ անվտանգության պետական վերահսկողություն.
 - 12) աջակցում է նորամուծությունների, տեխնիկական վերազինմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, կադրերի ուսուցմանը եւ վերապատրաստմանը.
 - 13) սննդամթերքի շուկայի կոնյուկտուրայի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում է հավաստի տեղեկատվություն եւ խորհրդատվություն.
 - 14) աջակցում է ենթակառուցվածքների կայուն գործունեությունն ապահովող ինստիտուցիոնալ (հաստատութենական) կառույցների ձեւավորմանը.

15) ապահովում է միջպետական փոխշահավետ տնտեսական համագործակցության ընդլայնումը եւ հանրապետության ագրարային հատվածի միջազգայնացումը:

ՀՈՂՎԱԾ 11. ՄՆՆՂԱՄԹԵՐՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր կողմից լիազորված մարմինների միջոցով իրականացնում է սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով սննդամթերքի ներմուծման եւ արտահանման պետական կարգավորումը հետեւյալ հիմնական ուղղություններով.

1) արտահանման համար բարենպաստ տնտեսական միջավայրի ձեւավորում, արտահանման խրախուսման նպատակային ծրագրերի մշակումը եւ իրականացումը.

2) սննդամթերքի առետրային հաշվեկշիռների պարբերական վերլուծությունը, արտաքին շուկաներում ձեւավորվող պահանջարկի եւ արտահանման ներուժ ունեցող արտադրատեսակների իրացման ինտեգրացված շուկայավարման (մարքեթինգային) հետազոտությունների իրագործումը.

3) արտահանման համար բարենպաստ երկրներում առետրային ներկայացուցչությունների ստեղծումը, հանրապետության տարածքում այլ երկրների, այդ թվում՝ Անկախ պետությունների համագործակցության, Եվրամիության անդամ երկրների ներկայացուցչությունների հետ համագործակցության ընդլայնումը.

4) տեղական արտադրության սննդամթերքն արտաքին շուկաներում իրացման խթանման նպատակով արտերկրներում առետրային կետերի, պահեստների, սառնարանների, տարավորման եւ փաթեթավորման արտադրամասերի ստեղծմանն օժանդակությունը.

5) բարձրորակ, մրցունակ սննդամթերք արտադրողներին, ինչպես նաեւ այդ ուղղությամբ գործունեություն իրականացնող գիտական հաստատություններին աջակցությունը.

6) սակագնային բարենպաստ քաղաքականության մշակումը եւ իրականացումը.

7) պետական վերահսկողության ուժեղացումը ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի որակի եւ սպառողների առողջության անվտանգության ապահովման բնագավառներում, այդ նպատակով փորձաքննության լաբորատորիաների ստեղծումը, տեխնիկական վերազինումը, կադրերի պատրաստումը, ինչպես նաեւ ինստիտուցիոնալ վերափոխումների իրականացումը.

8) ներքին շուկայում շրջանացվող սննդամթերքի, ներառյալ օրգանական գյուղատնտեսության մթերոլով արտադրված մթերքի համապատասխանության հավաստումը, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների պահանջներին, ինչպես նաեւ բույսերի պաշտպանության, անասնաբուժության, տոհմային անասնաբուժության եւ սանիտարական ու բուսասանիտարական բնագավառում Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կանոնների, նորմերի ու ստանդարտների պահանջների կատարման ապահովումը.

9) սննդամթերքի արտադրության, փոխադրման, վերամշակման, պահպանման, իրացման ապրանքային շարժի փուլերում գործող կոոպերատիվներին աջակցությունը՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀՈՂՎԱԾ 12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գյուղատնտեսության զարգացման պետական ծրագիրը (այսուհետ՝ պետական ծրագիր)

փասթաթուղթ է, որը սահմանում է գյուղատնտեսության զարգացման եւ գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու սննդամթերքի շուկայի կարգավորման նպատակներն ու հիմնական ուղղությունները, միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսված միջոցառումների իրականացման մեխանիզմները եւ գործունեության ֆինանսական ապահովումը, յուրաքանչյուր երեք օրացույցային տարիների համար (այսուհետ՝ եռամյա):

2. Պետական ծրագրի նախագծի կազմման աշխատանքներին մասնակցում են գործադիր իշխանության այն բոլոր մարմինները, որոնց գործառույթներն առնչվում են գյուղատնտեսության ոլորտին, ինչպես նաեւ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները:

3. Եռամյա պետական ծրագրի հիմնական ցուցանիշները, ներկայացված առաջարկությունները, ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից, որը ստեղծվում է գյուղատնտեսության ոլորտում պետական միասնական քաղաքականություն մշակող եւ իրականացնող գործադիր իշխանության պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից: Հանձնաժողովը բաղկացած է տասնհինգ անդամից, որից՝ հինգ անդամ լիազոր մարմնի ներկայացմամբ, հինգ անդամ՝ գյուղատնտեսական ապրանքարտադրողների միությունների (միավորումների) կողմից առաջադրված թեկնածուներից, հինգ անդամ՝ գյուղատնտեսության ոլորտի գիտակրթական կազմակերպությունների առաջադրած թեկնածուներից:

4. Հանձնաժողովի ստեղծման եւ գործունեության, պետական ծրագրի նախագծի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման ժամկետները, ինչպես նաեւ պետական ծրագրի նախագիծը լիազոր մարմին ներկայացնելու կարգը՝ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Պետական ծրագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պետական լիազոր մարմնի ներկայացմամբ:

5. Պետական ծրագիրը ներառում է կանխատեսումների վրա հիմնված գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, նպատակները, խնդիրները, արդյունավետության ցուցանիշները ու դրանցից բխող պարտականություններն ու գործառույթները՝ ներառյալ առաջիկա 3 տարիներին յուրաքանչյուր տարվան հատկացվող, պետական ծրագրի նպատակների ու խնդիրների իրագործման համար նախատեսված անհրաժեշտ ֆինանսական միջոցների բաշխումը:

6. Լիազոր մարմինը պետական ծրագրի առաջին ֆինանսական տարվան նախորդող տարվա փետրվարի 1-ից ոչ ուշ տեղեկություններ է հրապարակում՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցներով պետական ծրագրի նախագծին մասնակցության վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկատվություն մասնակիցների կողմից մասնակցության համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու ձեւը, միաժամանակ այդ տեղեկատվությունը տեղադրվում է լիազոր մարմնի ինտերնետային կայք էջում:

7. Պետական լիազոր մարմինը հաստատման նպատակով՝ մինչեւ պետական ծրագրի ավատին նախորդող տարվա օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաջորդ եռամյակին վերաբերող պետական ծրագրի նախագիծը:

ՀՈՂՎԱԾ 13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Պետական ծրագրի ենթածրագրերի մեջ ներառված հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ հանձնաժողովը կարող է դիմել լիազոր մարմնի աջակցությանը:

2. Պետական ծրագրի ենթածրագրերի մեջ ներառված մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերի գնահատման համար լիազոր մարմնի կողմից ստեղծում են փորձագիտական հանձնաժողովներ, որոնց մեջ մտնում են անկախ փորձագետներ, գյուղատնտեսական արտադրողների ներկայացուցիչներ ու գյուղատնտեսական արտադրանք, հումք ու սննդամթերք իրացնող անձիք, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործադիր

իշխանության պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

3. Փորձագիտական հանձնաժողովում պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի հանձնաժողովի անդամների թվի 1/3-ը:

4. Փորձագիտական հանձնաժողովների ստեղծման, ֆինանսավորման կարգը, աշխատակարգն ու գործունեության ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ անհատական կազմը՝ պետական լիազոր մարմինը:

5. Փորձագիտական հանձնաժողովը փորձաքննության ներկայացված յուրաքանչյուր ենթաձրագրի վերաբերյալ ներկայացնում է եզրակացություն, որը ներառում է յուրաքանչյուր ենթաձրագրի իրականացման արդյունքների եւ արդյունավետության գնահատականը, պետական ազրարային քաղաքականության նպատակների մատչելիության աստիճանը եւ իրականացման ողջամտությունը, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, այդ ենթաձրագրերի փոփոխության մասին առաջարկություններ:

6. Փորձագիտական հանձնաժողովը եզրակացությունը սահմանված ժամկետում եւ կարգով ներկայացնում է պետական լիազոր մարմնին:

ՀՈՂՎԱԾ 14. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1. Պետական ծրագիրը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ոչ ուշ քան պետական ծրագրին նախորդող տարվա նոյեմբերի 15-ը՝ երեք տարի ժամկետով:

2. Հաստատված պետական ծրագրում եռամյակի համար նախատեսված ֆինանսավորման չափը նվազման առումով հետագայում փոփոխության ենթակա չէ:

3. Հաստատված պետական ծրագրում նախատեսված՝ եռամյակի յուրաքանչյուր տարվան հասանելիք ֆինանսավորման չափը, համապատասխան ֆինանսական տարվան նախորդող տարում, հաջորդ տարվա համար կազմվող՝ «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում նվազեցման առումով ներառվում է առանց փոփոխությունների:

ՀՈՂՎԱԾ 15. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆՑՈՒՄԸ

1. Պետական ծրագիրը իրականացնում են լիազոր մարմինը, տարածքային կառավարման մարմինները, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց լիազորությունների շրջանակներում:

2. Գյուղատնտեսության ոլորտում պետական միասնական քաղաքականությունը եւ համապատասխան տարածքային նպատակային ծրագրերը ձեւավորվում եւ իրականացվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 16. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԸ

1. Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի մինչեւ մարտի 30-ը, նախապատրաստում եւ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախորդ տարում պետական ծրագրի իրականացման ընթացքի ու արդյունքների մասին ազգային զեկույց (այսուհետ՝ ազգային զեկույց):

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեկամսյա ժամկետում քննարկում եւ հաստատում է ազգային զեկույցը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ազգային զեկույցն ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

4. Լիազոր մարմինը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ազգային զեկույցը մինչեւ տվյալ տարվա մայիսի 15-ը հրապարակում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում եւ միաժամանակ այն տեղադրվում է լիազոր մարմնի ինտերնետային կայք էջում:

5. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նիստում լսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչի կողմից ներկայացվող ազգային զեկույցի մասին հաշվետվությունը:

ՀՈԴՎԱԾ 17. ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետական ծրագրի իրականացման ընթացքի ու արդյունքների մասին ազգային զեկույցը ներառում է.

1) պետական ծրագրի իրականացման արդյունքները ամբողջ անցած տարվա ընթացքում, ինչպես նաեւ դրա մեջ ներառված առանձին միջոցառումների արդյունքները: Եռամյակի ավարտի դեպքում՝ նաեւ եռամյակի ամբողջ ընթացքը եւ արդյունքները.

2) պետական ծրագրով սահմանված նպատակների եւ խնդիրների համապատասխան գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները.

ա. գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի եւ գյուղատնտեսական մթերքի վերամշակող արդյունաբերությունում արտադրված արտադրատեսակների համախառն արտադրանքի ցուցանիշները,

բ. գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման մակարդակը,

գ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ դրանց կառուցվածքը,

դ. գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը՝ ըստ տեսակների,

ե. բուսաբուծական եւ անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները,

զ. գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվությունը եւ գյուղատնտեսական կենդանիների մթերումը,

է. գյուղատնտեսության մեջ զբաղվածների միջին թվաքանակը,

ը. գյուղատնտեսության մեջ զբաղվածների հաշվով համախառն արտադրանքը (արտադրողականությունը),

թ. գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը,

ժ. ոռոգելի հողերի տեսակարար կշիռը՝ ցանքատարածությունների եւ բազմամյա տնկարկների տարածքների նկատմամբ,

ժա. գյուղատնտեսական տեխնիկայի առկայության եւ սարքիչության վերաբերյալ տվյալները,

ժբ. առաջնային անհրաժեշտ սննդամթերքի ինքնաբավության մակարդակը,

ժգ. գյուղատնտեսական մթերքների գները,

ժդ. այլ ցուցանիշներ.

3) հաջորդ տարում գյուղատնտեսության զարգացման կանխատեսումները.

4) անհրաժեշտության դեպքում ներկայացվում են առաջարկություններ՝ պետական ծրագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

ԳԼՈՒԽ 6

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՂՎԱԾ 18. ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետական աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսական ապահովագրության ենթակա են այն ռիսկերը, որոնք կապված են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի կորստի հետ, որոնք առաջանում են բնական աղետների (երաշտ, ցրտահարություն, կարկտահարություն, երկրաշարժեր, ջրհեղեղներ, հողի ճահճացում, սողանք եւ այլն), գյուղատնտեսական կենդանիների անկումը, որոնք առաջանում են հիվանդությունների եւ բնական աղետների հետեւանքով:
2. Գյուղատնտեսական ապահովագրության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եւ այլ միջոցների հաշվին տրամադրվում են սուբսիդիաներ, մինչեւ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական վճարի 50 տոկոսը:
3. Ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական ծախսերի փոխհատուցման համար պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաները սահմանվում են , Պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:
4. Ապահովագրության նպատակով իրականացվող ծախսերի համար պետական բյուջեից սուբսիդիաների տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈՂՎԱԾ 19. ՀՈՂԵՐԻ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Էկոլոգիական հավասարակշռության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության շրջանակներում եւ ի կատարումն գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի, գյուղատնտեսական հողերի պաշտպանության եւ դրանց բերրիության բարձրացման միջոցառումներ իրականացնելիս գյուղատնտեսական ապրանքարտադրողները ստանում են պետական աջակցություն, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական եւ համայնքային բյուջեների հաշվին հակակարկտային համակարգերի տեղադրման եւ շահագործման, ինչպես նաեւ հողերի բերրիության բարձրացման համար խթանող միջոցներ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ եւ այլ անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար:

ՀՈՂՎԱԾ 20. ՍՆՆՂԱՄԹԵՐՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետության կարգավորիչ միջամտությունն իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայում գների կարգավորման եւ գյուղատնտեսական ապրանքարտադրողների եկամուտների ողջամիտ մակարդակը պահպանելու նպատակով:
2. Միջամտությունը իրականացվում է իրացվող գյուղատնտեսական արտադրանքի գների կտրուկ անկման, այնպես էլ գների անհիմն աճի դեպքում:
3. Պետական ապրանքային միջամտության կարգը, մթերքների անվանացանկը, մեթոդները եւ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈՂՎԱԾ 21. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

1. Լիազոր մարմինը ագրոպարենային համակարգի գյուղատնտեսական ապրանքարտադրողների

հասարակական նշանակություն ունեցող շահերի համաձայնեցման նպատակով, գյուղատնտեսական ապրանքարտադրողների միություններին կամավոր հիմունքներով մասնակից է դարձնում ագրարային քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

2. Ագրարային քաղաքականության մշակմանը եւ իրականացմանը կարող են մասնակցել գյուղատնտեսական ապրանքարտադրողների այն միությունները (միավորումները) որոնց անդամակցող գյուղատնտեսական ապրանքարտադրողները արտադրում են տեղական գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու սննդամթերքի առանձին տեսակների առնվազն մեկ հինգերորդը:

3. Գյուղատնտեսական ապրանքարտադրողների միությունների պետական քաղաքականության մշակմանը եւ իրականացմանը մասնակցության ձեւերն են՝

1) նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, նպատակային ծրագրերի նախագծերի կազմման մասնակցությունը.

2) գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված գիտության եւ տեխնիկայի հայտնագործությունների, արտասահմանյան եւ տեղական փորձի ուսումնասիրման արդյունքների ներդրումը եւ տարածումը.

3) պետական ագրարային քաղաքականության ձեւավորման եւ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը եւ ստացումը.

4) պետական կառավարման մարմիններին՝ գյուղատնտեսությանը վերաբերող առաջարկությունների ներկայացնելը.

5) օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված մասնակցության այլ ձեւեր:

ԳԼՈՒԽ 7

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 22. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման ոլորտում պետական տեղեկատվական համակարգը ձեւավորում եւ նրա գործունեությունն ապահովում է պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Գյուղատնտեսության ոլորտում պետական տեղեկատվական համակարգի հիմքում ընկած է գյուղատնտեսության փաստացի վիճակը ու նրա զարգացման միտումները, արտահայտված՝ պետական լիազոր մարմնի, պաշտոնական վիճակագրական տեղեկատվական պետական մարմնի, մաքսային գործունեության նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող պետական կառավարման լիազոր մարմինների, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական համակարգերում:

3. Պետական տեղեկատվության համակարգի մեջ պարտադիր ներառվում է հետեւյալ տեղեկությունը՝

1) պետական եւ ճուղային նպատակային ծրագրերի իրականացման մասին.

2) բուսաբուծության եւ անասնաբուծության ճուղերի զարգացման մասին.

3) գյուղատնտեսական տեխնիկայի քանակի եւ վիճակի մասին.

4) գյուղատնտեսական նշանակության հողերի ուսումնասիրման մասին.

5) տարածքների սանիտարական եւ բուսասանիտարական վիճակի ուսումնասիրության մասին, կապված բույսերի եւ գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ու վնասատուների հայտնաբերման, ոչնչացման եւ կանխարգելման.

6) գյուղատնտեսության ոլորտում աշխատողների (զբաղվածների) թվաքանակի մասին

7) գյուղատնտեսական ապրանքների, հումքի եւ սննդամթերքի շուկայում հիմնական պարենային ապրանքների գների եւ ծավալների վերաբերյալ անցկացված ուսումնասիրությունների արդյունքները:

4. Պետական լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում եւ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների ինտերնետային կայքերում, պարտադիր տեղադրման եւ ոչ ուշ քան յուրաքանչյուր եռամսյակ թարմացման ենթակա տեղեկատվությունը ներառում է՝

1) պետական լիազոր մարմնի որոշումները.

2) գյուղատնտեսության զարգացման պետական աջակցությանն առնչվող, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հրապարակած նորմատիվ իրավական ակտերը.

3) մաքսատուրքերի, սակագնային քվոտաների ծավալի, գյուղատնտեսական ապրանքների, հումքի եւ սննդամթերքի քանակի ներմուծման եւ արտահանման մասին տեղեկատվությունը.

4) գյուղատնտեսական հիմնական ապրանքատեսակների արտադրության ներկա վիճակի եւ կանխատեսումների մասին տեղեկատվությունը՝ ըստ մարզերի եւ հանրապետության ամբողջ տարածքում ամբողջապես, ներառյալ՝ ամենամսյա հաշվետվություններ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի, բերքահավաքի, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, մսի, կաթի եւ այլ գյուղատնտեսական մթերքների արտադրության մասին տեղեկատվություն.

5) գյուղատնտեսական ապրանքարտադրողների կողմից իրացված գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու սննդամթերքի միջին արժեքի, նրանց կողմից ձեռք բերված արդյունաբերական արտադրանքների եւ առանձին պարենային ապրանքների գների մասին տեղեկատվություն.

6) պետական գնումային եւ ապրանքային միջամտությունների մասին.

7) պետական կարիքների համար գյուղատնտեսական արտադրանքի մրցույթների անցկացման մասին տեղեկատվություն.

8) պետական լիազոր մարմնի կողմից սահմանված այլ տեղեկատվություն:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի մեջ նշված տեղեկատվությունը տրամադրվում է անվճար, բոլոր շահագրգիռ անձանց երաշխավորվում է տեղեկատվության հավասար մատչելիությունը:

ՀՈՂՎԱԾ 23. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսության եւ գյուղի սոցիալական զարգացման բնագավառներում պաշտոնական վիճակագրությունը վարում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը՝ օրենքով սահմանված կարգով:

2. Գյուղատնտեսական արտադրության վերաբերյալ ամբողջական տվյալների հավաքագրումն իրականացվում է ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ անցկացվող համատարած հաշվառման արդյունքում՝ օրենքով սահմանված կարգով:

3. Համատարած հաշվառման աշխատանքների ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին եւ ֆինանսավորման այլ աղբյուրներից:

4. Գյուղատնտեսական արտադրության բնագավառում իրավիճակին համարժեք քաղաքականության մշակման եւ իրականացման նպատակով, բացի վիճակագրական ռեգիստրից լիազորված մարմինը կարող է վարել նաեւ վարչական ռեգիստր՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 24. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքը ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում ապահովում է սույն օրենքով նախատեսված՝ նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԳՅՈՒՂԱՏՆԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված Ազգային անվտանգության ռազմավարությամբ, որպես սոցիալ-տնտեսական կարեւոր հիմնահարցեր ամրագրված են երկրի պարենային անվտանգության, այդ թվում՝ տեղական արտադրության սննդամթերքի ծավալների ավելացման, ներմուծման եւ արտահանման հաշվեկշռի բարելավման, տարածքային համալիր ծրագրերի իրականացման, հատկապես՝ սահմանամերձ ու բարձրլեռնային գոտիների բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտությունը սահմանող դրույթներ: Այդ հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել գյուղատնտեսության ոլորտի պետական կարգավորման նպատակները, հիմնական ուղղությունները, գյուղատնտեսական մթերքի (հումքի) արտադրանքի շուկայի պետական կարգավորման ձեւերը:

Օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է նաեւ Առեւտրի Համաշխարհային Կազմակերպությանն անդամակցությամբ պայմանավորված՝ հնարավոր ռիսկերի մեղմման անհրաժեշտությամբ: Հաշվի առնելով երկրի գյուղատնտեսության խոցելիությունը (հարաբերական սակավահողությունը, սակավաջրությունը, ենթակառուցվածքների թերզարգացածությունը, գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, փոխառու միջոցների համալրման հնարավորությունների սղությունը եւ այլն) անհրաժեշտություն է առաջացել ներքին շուկայի եւ տեղական արտադրողների շահերի պաշտպանության նպատակով կատարելագործել ոլորտի պետական կարգավորման մեխանիզմները:

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները: Ներկայումս մի շարք իրավահարաբերություններ, որոնք ծագում են գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների, գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ, իրավաբանորեն հստակեցված չեն: Մասնավորապես, դեռեւս օրենսդրորեն սահմանված չեն գյուղի եւ գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, ուղղությունները, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի պետական կարգավորման մեխանիզմները: Դրա հետ մեկտեղ, դեռեւս օրենսդրորեն հստակեցված եւ սահմանված չեն գյուղատնտեսության ոլորտին առնչվող մի շարք հասկացություններ, օրինակ՝ գյուղատնտեսություն, գյուղատնտեսական արտադրություն, գյուղի զարգացում, գյուղատնտեսության համար անբարենպաստ տարածքներ եւ այլն: Նշված խնդիրները պահանջում են օրենսդրական կարգավորում:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը: Գյուղատնտեսությունը հանդիսանում է հանրապետության տնտեսության գերակա ոլորտներից մեկը եւ ոլորտում վարվում է պետական կարգավորման եւ աջակցության արդյունավետ քաղաքականություն: Տվյալ օրենսդրական

Նախաձեռնությունը համահունչ է ոլորտում վարվող քաղաքականությանը և նպատակաուղղված է ագրարային քաղաքականության համակարգված իրականացմանը, այն ներդաշնակեցնելով գյուղական տարածքների կայուն համաչափ զարգացմանը, հաշվի առնելով այդ բնագավառների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը:

Կարգավորման նպատակը և բնույթը: Առաջարկվող օրենքը կարգավորելու է այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են գյուղատնտեսական ապրանքարտադրողների, քաղաքացիների, իրավաբանական անձանց և գյուղատնտեսության զարգացման ոլորտի պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Օրենքի նախագիծը սահմանում է գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական քաղաքականության մշակման և իրականացման, սննդամթերքի շուկայի կարգավորման պետական քաղաքականության ուղղությունները, գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրի մշակման, հաստատման, իրականացման և փորձաքննության ընթացակարգը: Օրենքի նախագիծը սահմանում է նաև գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական աջակցության հիմնական ուղղությունները, ինչպես նաև գյուղատնտեսության և գյուղի զարգացման բնագավառների տեղեկատվական ապահովման ու վիճակագրության ոլորտի հարաբերությունները:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք: Նախագծի լրամշակման գործընթացին ներգրավվել են, ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ս. Բալասանյանը և նրա աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնատար անձինք, հաշվի առնելով, որ «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը նախատեսված է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկի 76-րդ կետով:

Ակնկալվող արդյունքները: Օրենքի նախագծի ընդունումը կնպաստի գյուղատնտեսության ոլորտում պետական կարգավորման և աջակցության գործընթացի համակարգմանը, ագրարային արտադրության արդյունավետության բարձրացմանը, տեղական արտադրության սննդամթերքի մրցունակության բարձրացմանը ներքին և արտաքին շուկաներում, ինչպես նաև ոլորտի միջազգային ինտեգրմանը:

Այլ տեղեկություններ: Նախագիծը լրամշակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության եզրակացությունում նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ տրված առաջարկությունները և համապատասխանեցվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներին: